

Արդեակ այր իմաստուն որչափ փառաւորի յաշխարհիս, հետեւող լիցի պատուիրանացն Մատուծոյ, և գովելի է ամենայն սրբոց. զի նման է նա արեգական, զի ուրբան բարձրանայ՝ առաւելուն ճառագայթք նորա յերկրի յամարայնոյ ժամանակի: — Այր զուարթ և առատամիտ սիրեցեալ է յՄատուծոյ և ՚ի մարդկանէ, և յաւելու ՚ի կեանս իւր զուարթութեամբն իւրով: — Բազում դէմն գայթակղեցուցանեն զմարդ կիներն և գինին: — Յորժամ արբենաս՝ կափո զլեզու քո և մի լինիր շատախօս, վասն զի բնութիւն քո ոչ է ՚ի ձեռն քո:

Արկիր մայր է ամենայն տնկոց, և արբեցութիւն ամենայն չարեաց: — Այր աներկիւղ ամբարիշտ և ամբարտաւան թէպէտ զէն և զրեհս ունի, սակայն մերկանդամ է:

Աչ եթէ իմանան է իմաստութիւն այլ կատարելն: Օ ի եթէ իմանաս զիմաստութիւն և ոչ կատարես՝ եղեր անիմաստ: Առանց գիրս կարգալոյ և քրննելոյ՝ ՚ի վերայ քո օր մի անցուցաներ, զի աճեցուցանէ ՚ի քեզ զիմաստութիւն, և ՚ի հանձար քո յաւելու:

Բնդ անգէտին ամենեւին մի խօսիր զի մի ծաղը լինիցիս:

Յառաջ դու դատ արա քեզէն ՚ի միտս քո, և ապա խօսեաց:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Նայելու է որ տղաք ձշմարտախօսութեան վարժին:

Տղոյ վրայ գէշ ախտերէն մէկն է նաև ստախօսութիւնը, ուստի դաստիարակին գլխաւոր պարտքը պիտի ըլլայ ջանալ ուղղել, և հեռացրնել ու սուկացրնել աս ախտէն: Միշտ պէտք է իրենց առջին վար զարնէ ստախօսութիւնը, իբր ցած, անարժան և ամբընալու ախտ մը. և թէ բողբոլիին անպատիւ կ'ընէ զմարդ, և կը նուաստացրնէ, և ամենէն անարգ մարդկանց

կարգը կ'անցրնէ, և նաև նոյն իսկ գերիներու վրայ ալ տեսնուելու որ ըլլայ՝ անտանելի բան կ'ըլլայ:

Կեղծաւորութիւնը, խորամանկութիւնը, և պատճառանքով անմեղ ձևանալը ամէն բանի մէջ, ստախօսութենէ այնչափ չեն տարբերիր, այլ մանաւանդ թէ շատ անգամ անվրէպ ծայրը հսն կ'երթայ: Պէտք է որ տղայ մը գիտնայ թէ վարժապետը քսան անգամ իրեն պակասութեանցը կը ներէ, քան թէ գէշ պատճառանքներով պարզաբար ծածկէ միանգամ ձշմարտութիւնը յանցանքը գոյելու համար: Արբոր տղայ մը իր յանցանքը կը խոստովանի առանց խարդախութեան, նայէ որ գովես իր բարեսրտութիւնը, և ներէս իրեն յանցանացը, ու անկէ ետքը ալ անոր վրայ ամենեւին խօսք չընես: Բայց նայելու է որ չըլլայ թէ տղաքը միայն պատժուելէ ազատելու համար սովորութիւն ընեն իրենց ըրածը խոստովանելու. վասն զի ան ատեն դաստիարակին մեծարանքը կը պակսի տղայոց առջև, և գրեթէ խաղալիք մը կ'ըլլայ անոնց, վասն զի պարզամիտ և բարեսիրտ տղու տեղ կը դնեն զինքը:

Պէտք է որ տղաք ինչ որ տեսնեն և լսեն իրենց ծնողքէն և վարժապետներէն ձշմարտասիրութեան յորդորուին, և միանգամայն ատելութիւն մը ունենան ամէն տեսակ կեղծաւորութեան դէմ: Բնոր համար ամենեւին պէտք է կեղծաւորութիւն բանեցրնել զիրենք հանդարտեցրնելու և կամ համոզելու համար. և ոչ իսկ խոստանալ և կամ սպառնալ անանկ բան մը որ գիտեն թէ ընելու ամենեւին միտք չունիս: Բնով խորամանկութիւն կը սորվեցրնես իրենց, որուն արդէն բնութեամբ հակամիտութիւն կ'ունենան:

Այս վտանգիս առջևն օւնելու համար, սորվեցրնելու է տղոց որ ինչ որ ուզեն անկեղծութեամբ զուրցեն. իրենց պէտք է հասկըցրնել որ խորամանկութիւնը միշտ գէշ սրտէ առաջ կու գայ, վասն զի խորամանկ ըսուելուն պատճառը ան է որ կ'ուզէ ծածկել այն

պիտի բաներ ընելու փափաքը՝ որոնք օրինաւոր չեն, և յայտնուելու որ ըլլան՝ արգիլուելու արժանաւոր կը սեպուին. երբեմն ալ կ'ըլլայ որ ուզածնին օրինաւոր է՝ բայց անոր հասնելու համար բռնած միջոցները ապօրինաւոր. խորամանկութիւն ընողները շատ անգամ իրենց վախճանին չկարենալով հասնիլ, ծիծաղելի կ'ըլլան, և շատ անգամ ալ նաև ատելի: Եւ որ քանի մը անգամ իրենց կեղծաւորութեանը վրայ հասնիս, ամօթով ձգէ զիրենք: Երբեմն երբեմն սիրած բաներնէն զրկէ, երբոր այն բանը խորամանկութեամբ ուզենան ձեռք ձգել, և ըսէ յայտնի իրենց որ երբոր սլարզ ու առանց պտոյտի խընդրեն՝ ան ատեն կ'առնուն:

Եւ մէն ջանք ընելու է տղոց միտքը խոթելու համար թէ որչափ վնասակար է այս ախտը իրենց պատուոյն, և թէ որչափ մեծ տարբերութիւն կայ ան տրդուն մէջ որ ճշմարտախօս, պարզամիտ և հաւատարիմ է և որուն վրայ բոլորովին կրնաս վստահանալ, և անոր՝ որ միշտ կասկածաւոր է, և կրնաս միշտ անվստահ ըլլալու իրաւունք ունենալ, որ թէ նաև ճշմարտութիւն մըն ալ զուրցելու ըլլայ, չհաւտացուիր:

ԼՈՒՔ

բաւնասիրաւան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ք Ս Ո Ր Ե Ա Լ Ն Հ Ո Պ Ի

Դ

Սկսան ոմանք ցած ձայնով մը ըսել. Ո՛ր կը վազէ. Տէր Եստուած, գուցէ խեղճը խելքը կորսընցուց. այս ինչ ցաւեր գլուխն եկան: Մահն անոր ամէն ունեցածը զարկաւ խորտակեց. աշխարհքիս վրայ մէկ աղջիկն էր մնացեր. Ինչպէս պիտի կարենայ անոր կորըս-

տեանը դիմանալ: Խեղճ Սառա: Եւ սակայն ո՞վ արդեօք իրմէ աւելի Եստուծոյ օրհնութեանն արժանի եղեր է. ո՞վ Սառայէն աւելի գիտէր վշտացելոց վիրացը վրայ եղ և գինի սփռել. ո՞վ իրմէ աւելի փրկչին պատուիրանացը հաւատարիմ գտնուեր է: Տաճարին մէջ սրբակեաց այրեաց հետ կ'աղօթէր, ու լացողին հառաչանացը հետ իր հեծութիւնը կը խառնէր, և Եստուծոյ ընդունած սակաւաձեռն ստացուածքը աղքատաց կը բաժնէր. 'ի վերայ այսր ամենայնի ամենէն խիստ ցաւերն իր վրայ ծանրացան:

Իսկ Սամելայ աղջկունքն, որ դեռ հաւատքնուն մէջ կը դեղեկէին, ծունկ չոքած լալով կ'ըսէին.

— Եթէ սրբասէր Սառա այնչափ տրտմութեանց մէջ է, մենք ինչ բանի կրնանք մեզմէ յուսալ, որ մանկութեան ծաղիկ հասակն ունինք: Մեր հարց Եստուածն աւելի արդար էր. ամենուն ըստ իւրաքանչիւր գործոց կը հատուցանէր, և պատիժը յանցաւորաց համար էր միայն. ինչո՞ւ մենք ալ այն բարեացն արժանի պիտի չըլլանք:

Սրբակեաց քրիստոնեայ այրիներն ալ կուլային, բայց առանց ամենեւին յուսահատելու, այն աղջկանց այսպէս կ'ըսէին.

— Ենթանելի են Եստուծոյ դատատանները, ո՞վ կրնայ գիտնալ ինչ որ ինքը մեզի համար առաջուց որոշած է: Ղակատնիս հողուն դնենք և աղաչենք, ինքն է որ Լն. միթէ զյուսիտենականութիւնը վարձք կամ պատիժ չէ պարտաւորած անոնց, որ այս ունայն աշխարհքիս վրայ ցաւոց հնոցին դատապարտեր է:

Իսկ Սամելայ աղջկունքը ունուութեամբ կը պատասխանէին.

— Յաւերն ու հալածանքները խաչեցելոյն Յիսուսի աշակերտացը համար է միայն. ո՞վ կրնայ զմեզ համոզել թէ իմաստութիւն է անոր պաշտամանը նուիրել ինքզինքն, թողլով Երրօր համու, Իսահակայ ու Յակոբայ Եստուծոյն մեր հարց հրամայած պաշտօնը:

Տես երես 91, 141: